

**«Կոնվերս Բանկ»-ի միասնական գրասենյակների կողմից մատուցվող
ծառայություններ**

1. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակների կողմից մատուցվող ծառայություններ՝

1.1 Իրավաբանական անձանց լուծարման գործընթացի և լուծարման գրանցում:

1.2 Բոլոր առևտրային իրավաբանական անձանց, համայնքային պետական ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցում, փոփոխությունների գրանցում կամ գրանցման մերժում, նշված իրավաբանական անձանց լուծարման գործընթացի և լուծարման գրանցում, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառումից հանման գրանցում կամ մերժում:

1.3 Անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում և պետական հաշվառման մերժում:

1.4 Իրավաբանական անձանց վերակազմավորում պայմանավորված պետական գրանցումներ կամ պետական գրանցումների մերժում:

1.5 Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների վերակազմավորում պայմանավորված պետական հաշվառումներ կամ պետական հաշվառումների մերժում:

1.6 Պետական միասնական գրանցամատյանների ամբողջական տեղեկությունները, ինչպես նաև իրավաբանական անձի կանոնադրության պատճենը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց թղթային տարբերակով տրամադրում:

1.7 Փաստաթղթերի պատճենահանումը և պատճենների տրամադրում՝ ներառյալ իրավաբանական անձի կանոնադրության պատճենի տրամադրում, թղթային տարբերակով:

1.8 Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

2. ՀՀ կառավարության կողմից լիազորված անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի կողմից մատուցվող ծառայություններ:

2.1 Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:

2.2 Գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: